ռոնց համեմատ տաճարը կոչվում է «յարկ Սրբոյն Ստեփանոսի», «սուրբ Ստեփանոսի գերեզման», սուրբ«Ստեփանոս». Թյուրիմացություն պիտի համարել Ալիշանի կարծիքը, վորպես թե տաճարը նվիրված եր նաև Ստեփանոս Նախավկայի հիշատակին։ Միակ դժվարությունն այս մտքի հաստատության՝ շինության և Որբելյանի տված թվականների տարբերությունն է. սակայն անհավանական չէ, վոր առաջինը սկսվածքի թվականը լինի, իսկ յերկրորդը վերջավորության, մանավանդ վոր 1278 թվից ունինք Ամիրշահի արձանագրությունը վանքի նեքսը՝ աջ դասի ավանդատան գլխին, վորով հայտնում է, թե ինքն է հոգացել այդ ավանդատան կամ ըստ արձանագրության մատրան ծախսը։ Թանահատը և Վայոց ձորի Նորավանքը, ուր ապրում եր ժամանակակից պատմիչը, այնքան մոտ եյին իրար, վոր նա սխալվել կարող չեր։ Որբելյանի նույն թվականը պահված է և Յայսմավուրքի՝ Ստեփանոս Սյունեցու վկայաբանության մեջ, վոր հավանորեն ԺԴ – ԺԵ. դարում արդեն առնված եր Որբելյանից այդտեղ։ Պատմիչի այս տեղեկությունից իմանում ենք նաև, վոր վանքի շինության մասնակից եյին «ընակիչք տեղւոյն», այսինքն միաբանները։ Այս և ուրիշ վանքերի շինության արձանագրություններից ել յերևում է, թե տեղի միաբանությունը վանահոր գլխավորությամբ միշտ դրական մասնակցություն են ունեցել վանքերի շինության մեջ։

Ցեկհղեցին յուր արտաքինով մի շատ գողտրիկ շինք է. յուրատեսակ գեղեցկություն է տալիս մանավանդ գմբեթի բարձր թմբուկը, զարդարված բարձրաքանդակներով։ Տաճարի մարմինը քառանկյունի է դրսից. բացի արևմտյան պատից, մյուսները կտրատված են զոյգ նիշերով. մի մի նեղ և յերկարավուն լուսամուտ պատերի վերին ճակատներում, վոր շրջանակված և ներքևից վեր բարձրացող զույգ յերիշկաձևով (տ. հարավային պատը. պատկ. 46)։ Մի մի փոքրիկ, անզարդ լուսամուտներ ել գտնվում են արևելյան պատին աւանդատների համար։ Միայն մի դուռ ունի՝ արևմտյան կողմից, քառանկյունի բացվածքով, վոր շրջանակված և նման յերիշկաձևերով և վերջանում է կամարակալ քարի գլխին սրածայր աղեղով։ Մի յերկրորդ արտաքին շրջանակ քառանկյունի յե, մեջն առնելով դրան շրջանակը յուր կամարակալ քարով, վեր և բարձրանում, կրկին քառանկյունի շրջանակ կազմում արևմտյան լուսամուտի շուրջը և վերջանում ճակատին բոլոր բագլուխ գավազանով, մեջը դուրս ընկած պորտով (տ. արևմտյան պատը. պատկ. 46)։

Հարավային պատի վերա, լուսամուտից ներքև, նայողի ձախ կողմից, մի բազմ պատում է մի ուրիշ թռչունի կուրծքը. իսկ աջից արևի ժամացույցի գլխին քանդակված է ավելի փոքր, յելնդավոր մի սկիհ, վորից խմում են յերկու դեմ առ դեմ կանգնած թռչունները, յերկու սիրամարգ առանց փռված պոչերի։ Ճիշդ նման մի մոտիվ գտնվում է Կայիբեի թանգարանում, մի գերեզմանական հուշարձանի կտորի վերա, վոր Crum-ից առել և Kaufman*։ Փոքր ինչ տարբեր ձևակերպությամբ և փոփոխակներով՝ մեր մանրանկարչական սիմբոլիկ զարդարության ամենասիրելի մոտիվներից մեկն է։ Այս մոտիվն անցել է նաև Անիի կարասներին**։ Սիրամար-

Խաչարանդակ Պռոշի վիմափոր տաճարում. **Պատկեր 41.**

* Handbuch der Christlichen Archäologie. Poderborn. 1905. 313/4.

** Х. В. Том: V. вып. I Пет. 1916. Чубинов. Г. Декоративное убранство Анийских карасов. табл. XV. 4.